

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ-

011401.00.6 ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐ-

011401.04.6 ՖԻԶԻԿԱ

ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ-

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐ

1. Մասնագիտության թվանիշը և անվանումը	011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն
2. Կրթական ծրագրի թվանիշը և անվանումը	011401.04.6 Ֆիզիկա
3. Շնորհվող որակավորումը	Մանկավարժության բակալավր
4. Կրեդիտների քանակը	240
5. Ուսումնառության լեզուն	Հայերեն
6. Ուսուցման ձևը	Առկա
7. Ուսումնառության ժամկետը	2023-2027թթ.
8. Կրթական ծրագրի ընդունելության պահանջները	
<p>Ծրագրի ընդունելության չափանիշները / պահանջները Ընդունելությունը կատարվում է համաձայն «ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգ», ՀՀ կառավարության որոշման (26 ապրիլի 2012 թվականի N 597 –Ն): Ընդունելության համար դիմորդը հանձնում է ընդունելության քննություններ հետևյալ առարկաներից` «Մաթեմատիկա»(գ) -պարտադիր «Ֆիզիկա»(գ) կամ «Անգլերեն լեզու» (գ)-կամընտրական</p>	
9. Կրթական ծրագրի նպատակները	
<p>«011401.00.6-Մասնագիտական մանկավարժություն» մասնագիտության «011401.04.6-Ֆիզիկա» կրթական ծրագրի նպատակն է պատրաստել ֆիզիկայի ուսուցիչ, որն օժտված է ֆիզիկայի հիմնական դասընթացների բնագավառում հիմնարար գիտելիքներով և հմտություններով և իր տեսական և գործնական հմտություններով կրավարարի աշխատաշուկայի ներկայիս պահանջները, ունակ կլինի իրականացնելու մանկավարժական գործունեություն դպրոցներում, ուսումնական հաստատություններում:</p>	
10. Կրթական ծրագրի կրթական վերջնարդյունքները	
<p>«Ֆիզիկա» մասնագիտությամբ մանկավարժության բակալավրը պատրաստված է մանկավարժական-մեթոդական, խորացված հիմնարար և մասնագիտական գիտելիքներ պահանջող գործունեության:</p> <p><u>Գիտենա՝</u></p> <ul style="list-style-type: none"> • կրթության կազմակերպման հիմնական ձևերը, աստիճանները և մակարդակները, • ուսումնական գործընթաց իրականացնելու տեխնոլոգիաները և մեթոդները, • ժամանակակից տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառման սկզբունքները, • ինքնուրույն ուսումնական և մեթոդական նյութեր մշակելու, ֆիզիկայի պարապմունքները պլանավորելու, վերլուծելու կարողություն, • ուսումնական գործընթացում առկա մեթոդական խնդիրները առանձնացնելու և 	

առաջադրելու կարողություն,

- մասնագիտության սոցիալական նշանակությունը և մասնագիտական գործունեության իրականացման շարժառիթները,
- բնագիտության հիմնական սկզբունքները, հայեցակարգերը, բնության երևույթների և պրոցեսների ֆիզիկական բնույթը, նրանց նկարագրող հիմնարար օրենքները և տեսությունները,
- ֆիզիկայի փորձարարական, տեսական, մեթոդաբանական, հայեցակարգային, փիլիսոփայական հիմունքները, զարգացման պատմությունը, ժամանակակից վիճակը,
- ֆիզիկայի մաթեմատիկական ապարատը և կիրառությունները ֆիզիկական օրենքների, բանաձևերի, հավասարումների մաթեմատիկական ձևակերպման, մեկնաբանման և տեսական ու գործնական խնդիրների լուծման նկատմամբ մասնագիտական գործունեության ընթացքում,
- հետազատության ժամանակակից մեթոդները, տեխնոլոգիաները, փորձարարական սարքավորումները,
- կրթական և մանկավարժական տեխնոլոգիաները և նրանց կիրառությունները մասնագիտության ոլորտում,
- ֆիզիկական երևույթների, պրոցեսների, փորձերի, մաթեմատիկական մոդելավորման և ծրագրավորման մեթոդները, լեզուները, տեխնոլոգիաները,
- մասնագիտական գործունեության ոլորտում տեղեկատվության հավաքման, վերլուծման, համակարգման և օգտագործման տեխնոլոգիաները,
- ժամանակակից ֆիզիկայի հիմնական սկզբունքները և հայեցակարգերը:

Կարողանա՝

- կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա,
- կազմակերպել մանկավարժական գործընթացը՝ հաշվի առնելով սովորողների անհատական, տարիքահոգեբանական առանձնահատկությունները:
- կայացնել արդարացի վճիռներ տարբեր իրավիճակներում,
- կիրառել գնահատման տարբեր ձևեր,
- հետևողականորեն կատարելագործել իր առարկայական մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները,
- պլանավորել, կազմակերպել, իրականացնել, ղեկավարել, վերահսկել, գնահատել դպրոցական տարիքի երեխաների ուսումնադաստիարակչական գործընթացը,
- պլանավորել և իրականացնել մանկավարժական գիտափորձ, կատարել եզրահանգումներ, ընդհանրացնել ստացված փորձարարական արդյունքները, ներկայացնել ստացված արդյունքները,
- փորձի ընթացքում ստացված տվյալները ենթարկել վիճակագրական վերլուծության,
- կատարել հիմնավորված եզրահանգումներ ֆիզիկական երևույթների, օրինաչափությունների, օրենքների մասին,
- կիրառել ֆիզիկամաթեմատիկական և մանկավարժահոգեբանական մասնագիտական գիտելիքները, մեթոդական պատրաստվածությունը մասնագիտական ուսումնամեթոդական ծրագրերի կազմման, իրականացման գործընթացում,
- կիրառել ֆիզիկայի մաթեմատիկական ապարատը ֆիզիկական օրենքների,

բանաձևերի, հավասարումների մաթեմատիկական ձևակերպման և ֆիզիկայի տեսական ու գործնական խնդիրների լուծման նկատմամբ,

- կազմակերպել ֆիզիկական էքսպերիմենտ (լաբորատոր, ուսումնական, համակարգչային և հետազոտական), կատարել տվյալների մաթեմատիկական մշակում և համակարգչային վերլուծություն, օգտագործելով ժամանակակից հաշվողական, ֆիզիկական, վերլուծական և տեխնոլոգիական տարբեր նշանակության սարքավորումներ,
- կիրառել ժամանակակից սարքերը և սարքավորումները ֆիզիկական հետազոտությունների կատարման և ֆիզիկատեխնիկական, բնագիտական խնդիրների լուծման նպատակով,
- կիրառել դասավանդման ժամանակակից մեթոդները և տեխնոլոգիաները, այդ թվում նաև տեղեկատվական, կրթական հաստատությունում ուսումնամեթոդական և դաստիարակչական արդյունավետ գործընթացի ապահովման համար,
- մասնագիտական գործունեության արդյունքները ներկայացնել հաշվետվությունների, պրեզենտացիաների, զեկույցների ձևով հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով,
- մեկնաբանել ֆիզիկական երևույթների միջև պատճառահետևանքային կապերը,
- աշակերտների մեջ ուսումնական դրդապատճառներ առաջացնել:

Տիրապետի՝

- ուսուցման նորագույն մեթոդներին և հնարներին,
- ստուգման և գնահատման համակարգերին,
- մասնագիտական ոլորտի լեզվին (գրավոր և բանավոր) և երկու օտար լեզուներով հաղորդակցմանը,
- հոգեբանա-մանկավարժական ու մեթոդական խնդիրների լուծման մեթոդներին,
- հետազոտությունների պլանավորման և կազմակերպման մեթոդներին,
- հիմնարար ֆիզիկամաթեմատիկական գիտելիքների, մասնագիտական առարկաների դասավանդման մեթոդիկաների, կրթական և մանկավարժական արդյունավետ տեխնոլոգիաների,
- ֆիզիկայի մաթեմատիկական ապարատին և կիրառություններին,
- տեսական և փորձարարական հետազոտությունների, դիտումների, փորձերի արդյունքների մաթեմատիկական մշակման, վերլուծության և մեկնաբանման մեթոդներին,
- մասնագիտական գործունեության ընթացքում ծագող խնդիրների լուծման թվային տվյալների մշակման, վերլուծման, տարբեր մեծությունների միջև կախվածությունների մաթեմատիկական ձևակերպման մեթոդներին,
- լաբորատոր փորձարարական սարքավորումների շահագործման, ծրագրային ուսումնական և հետազոտական փորձերի կատարման մեթոդիկային, տեխնիկային, տեխնոլոգիաներին,
- բնագիտական, ֆիզիկական երևույթների, պրոցեսների, խնդիրների մաթեմատիկական մոդելավորման մեթոդներին և ծրագրավորման ժամանակակից լեզուներին, տեխնոլոգիաներին,
- մասնագիտական տերմինաբանությանը, բառապաշարին, որոնք կիրառվում են տեքստերի, գիտական, ուսումնամեթոդական զեկույցների, հոդվածների կազմման և խմբագրման ընացքում:

<p>11. Կրթական ծրագրի ուսումնական պլանը</p>
<p>Կցվում է</p>
<p>12. Գնահատման ձևերը</p>
<p>Գնահատման մեթոդներ և չափանիշներ</p> <p>ա) գնահատման մեթոդներ Ռեֆերատ, Էսսե, Չեկույց, Թեստ, Գործարար խաղեր /ակտիվ մասնակցություն/, Կլոր սեղան /ակտիվ մասնակցություն/, Կոնկրետ իրավիճակների վերլուծություն, Նախագծերի մեթոդ, Հարցի նախապատրաստման մոդել, Ինքնուրույն աշխատանք համացանցում, Աշխատանքային տետրի վարում, Կուրսային աշխատանք, Հարցազրույց, Ստուգողական աշխատանք,</p> <p>բ) գնահատման չափանիշներ ՎՊՀ–ում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ:</p>
<p>Մագիստրատուրայի ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 100 միավորանոց սանդղակը, որը համապատասխանում է ECTS գնահատման համակարգին:</p> <p>Այն ներառում է հետևյալ բաղադրիչների գնահատում և հաշվառում.</p> <ul style="list-style-type: none"> • ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճան, • ինքնուրույն կատարվող աշխատանքներ, • գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի մասնակցություն, • նրա կողմից դրսևորած ակտիվությունը, հմտությունները և կարողությունները, • ընթացիկ և ամփոփիչ քննություններ կամ ստուգումներ:
<p>13. Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները</p>
<p>Մասնագիտական գործունեության ոլորտները.</p> <p>011401.04.6 «Ֆիզիկա» մասնագիտությամբ բակալավրը ԲՈԻՀ-ն ավարտելուց հետո կարող է զբաղեցնել հետևյալ պաշտոնները.</p> <ul style="list-style-type: none"> • ՀՀ օրենսդրությամբ և գերատեսչական փաստաթղթերով նախատեսված մանկավարժական-մեթոդական և ֆիզիկական ուղղվածություն ունեցող կառույցների աշխատակից, • ավագ, միջնակարգ և հիմնական դպրոցներում՝ որպես ֆիզիկայի ուսուցիչ, • մանկատներում, արտադպրոցական ուսումնադաստիարակչական կենտրոններում՝ որպես մանկավարժ, • մանկավարժական, գիտա-կրթական կենտրոնների (համալիրների) աշխատակից, դաստիարակչական հաստատությունների մանկավարժ, աշխատակից, • մանկավարժական, գիտահետազոտական և ուսումնական հաստատություններում՝ որպես լաբորանտ: <p>Հետագա ուսման հնարավորությունները.</p> <p>Ֆիզիկա մասնագիտությամբ մանկավարժության բակալավրի բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագիրը յուրացրած բակալավրը պատրաստ է կրթությունը շարունակելու</p> <ul style="list-style-type: none"> • մագիստրատուրայում՝ ստանալու ֆիզիկայի մագիստրոսի որակավորում,

<ul style="list-style-type: none"> մագիստրատուրայում՝ ստանալու այլ մասնագիտությամբ մագիստրոսի որակավորման աստիճան:
<p>14. Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը</p> <p>Բակալավրերի պատրաստման հիմնական կրթական ծրագրեր իրականացնելու համար ՎՊՀ-ն ունի նյութատեխնիկական բազա՝ ապահովելու սովորողների առարկայական և միջառարկայական պատրաստվածությունը, լաբորատոր, գործնական և գիտահետազոտական աշխատանքները:</p> <p>Բակալավրական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ապահովման ցանկը իր մեջ ընդգրկում է՝</p> <ul style="list-style-type: none"> տեսալսողական կաբինետներ, ուսումնական լսարաններ՝ կահավորված մուլտիմեդիական ցուցադրական համալիրներով, համակարգչային լսարան՝ գլոբալ որոնողական համակարգեր մտնելու հնարավորությամբ, մասնագիտությանը համապատասխան հատուկ կահավորված լաբորատորիաներ, ուսումնամեթոդական կաբինետներ:
<p>15. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս</p>
<p>ՀՀ Կառավարության 2016 թվականի հուլիսի 7-ի N 714 - Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության որակավորումների ազգային շրջանակ»¹</p>